



31.10.2023

## ԿԱՐԾԻՔ

**Հակոբ Արշակյանն ընդդեմ ArmDay.am և Lurer.com լրատվական կայքերի**

### Փաստերը

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախկին նախարար (այժմ՝ Ազգային ժողովի փոխնախագահ) Հակոբ Արշակյանը 2022թ. հունիսի 9-ին հայցադիմում է ներկայացրել Երևանի ընդհանուր իրավասության դատարան՝ ընդդեմ «Արմդեյթեյմ» և «Ինթերնեյշնլ մեդիա հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների՝ նրանց կողմից գործարկվող լրատվական կայքերի հրապարակման մեջ տեղ գտած զրպարտություն համարվող տվյալները հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջներով (տե՛ս դատական գործ [ԵԴ/29999/02/22](#)):

Հակոբ Արշակյանն իր հայցադիմումում հայտնել է, որ պատասխանող ընկերություններին պատկանող [armday.am](#) և [lurer.com](#) կայքերը 2022թ. փետրվարի 14-ին հրապարակել են «ԲՊ-ական պաշտոնյաների նախկին գործատուների հետհեղափոխական «հաջողությունները». մաս 1» վերտառությամբ նյութ, որում ներկայացվել են հայցվորի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող, իրականությանը չհամապատասխանող, զրպարտող տվյալներ: Հայցվորը որպես այդպիսի արտահայտություններ է վկայակոչել հետևյալ երկու մեջբերումները:

Մեջբերում 1.

*«Դիցուկ՝ ԲՏԱ նախկին նախարար, այժմ ԱԺ խոսնակի ԺՊ Հակոբ Արշակյանի պատմությունը: Երկու տարի առաջ կառավարության նիստերից մեկում հավանության արժանացած «Ինժեներական քաղաքի»-ի ստեղծման ծրագրին նախորդել էին միջգերատեսչական զգվտողներ: Բանն այն է, որ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը սեփականացրել ու որպես իր ծրագիր էր ներկայացրել ավելի վաղ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից մշակված ու ներկայացված նախագիծը:»*

*«Որն է կերպ հիմնավորված չէ մի պետական գերատեսչության կողմից նախաձեռնված ծրագրի շրջանակում մշակված փաստաթուղթը մեկ այլ պետական գերատեսչության կողմից պատճենելու և որպես նոր նախագիծ ներկայացնելու տրամաբանությունը»,- նշված է տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներկայացրած եզրակացության մեջ»:*

Մեջբերում 2.

*«Տրանսպորտի նախարարը, Հակոբ Արշակյանը՝ Կառավարության որոշում է անցկացնել տվել, որով պետությունը Համաշխարհային Բանկից 10 միլիոն դոլար պարտք է վերցնում Հակոբի նախկին գործատուի (National instruments), Հակոբի սեփական ֆիրմայի (Araxis Engineering) և մի քանի այլ ընկերության հետ Ջրվեժում Ինժեներական քաղաք ստեղծելու համար: Ծախսերի 50 տոկոսը պետք է կրի պետությունը՝ ՀՖ վարկի հաշվին, իսկ մնացած 50 տոկոսը Հակոբ Արշակյանի նախկին գործատուն, Հակոբ Արշակյանի սեփական ֆիրման և մի քանի այլ ընկերություն»,-գրել է սոցցանցի օգտատերերից մեկը»:*

Նշվածի հիման վրա հայցվորը դատարանից խնդրել է պարտավորեցնել պատասխանող ընկերություններին հրապարակայնորեն հերքել զրպարտություն հանդիսացող տվյալները, բռնագանձել 5 միլիոն դրամ որպես պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին հասցված վնասի փոխհատուցում և 170 հազար դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

2023 թվականի սեպտեմբերի 8-ին դատարանը կայացրել է վճիռ, որով խնդրո առարկա արտահայտությունները գնահատել է զրպարտող և մասնակիորեն բավարարել է հայցվորի փոխհատուցման պահանջը՝ պարտավորեցնելով պատասխանողներին համապարտության կարգով վճարել նրան 500 հազար դրամ փոխհատուցում և 35 հազար դրամ՝ որպես վճարված պետական տուրք:

Պատասխանողների ներկայացուցիչները չեն մասնակցել դատական քննությանը: Բացի այդ, [Datalex.am](https://datalex.am) տեղեկատվական համակարգից երևում է, որ վճիռը չի բողոքարկվել ու մտել է ուժի մեջ:

## **Եզրահանգում**

Ինչպես նշվեց, սույն գործում պատասխանող ընկերությունները չեն մասնակցել դատական քննությանը և չեն ներկայացրել իրենց փաստարկները: Այս հանգամանքում Խորհուրդը ստիպված է դատական ակտի իրավաչափության մասին իր եզրահանգումները ներկայացնել բացառապես փաստերի սեփական գնահատականների հիման վրա:

Մինչ վեճի էությանն անդրադառնալը Խորհուրդն անհրաժեշտ է համարում նշել, որ թեև հայքը ներկայացվել է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 13-րդ կետի հիմքով՝ հայցային վաղեմության առաջին ժամկետի պահպանմամբ (վիճահարույց հրապարակման պահից վեց ամսվա ընթացքում), դատական ակտում անդրադարձ չի կատարվել, թե արդյոք պահպանվել է նույն նորմով սահմանված վաղեմության երկրորդ ժամկետը (զրպարտության մասին իմանալուց հետո մեկ ամսվա ընթացքում): Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ պատասխանողները չեն մասնակցել դատական քննությանը և չեն ներկայացրել առարկություններ հայցային վաղեմության ժամկետների վերաբերյալ, քաղաքացիական դատավարության սկզբունքներից ելնելով՝ դատարանը կաշկանդված չէր քննությունը շարունակել ու ընդունել վճիռ առանց վաղեմության ժամկետի հարցին անդրադառնալու՝ նույնիսկ եթե հայքը բերված լիներ այդ ժամկետի խախտմամբ:

Ինչ վերաբերում է վեճի էությանը, ապա սույն դատական գործը վերաբերում է բարձրաստիճան պաշտոնատար անձի հրապարակային քննադատությանը՝ կապված հանրային ծառայությունում իր գործառնությունների ու լիազորությունների իրականացման հետ: Այդ առումով կարևոր է ընդգծել, որ խնդրո առարկա հրապարակումը հանրային հետաքրքրություն ներկայացնող գործընթացների մասին, որոնց վերաբերյալ հասարակությունը տեղեկացված լինելու իրավունք ունի: Այդ հանգամանքով պայմանավորված՝ վիճահարույց նյութի հեղինակը և այն հրապարակած լրատվամիջոցները օգտվում են ազատ խոսքի իրավական պաշտպանության լայն շրջանակից, որն անհրաժեշտ է, որ ապահովվի տեղեկությունների ու գաղափարների ազատ ու անկաշկանդ հոսքը լրատվամիջոցներից դեպի հասարակություն:

Ավելին՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց ու քաղաքական գործիչների նկատմամբ քննադատության թույլատրելի շրջանակները լայն են, իսկ այդ անձինք պետք է դրսևորեն առվել հանդուրժողականություն իրենց հասցեագրված քննադատության հանդեպ: Այս լույսի ներքո պետք է դիտարկել նաև այն, որ ազատ խոսքի պաշտպանությունը տարածվում է ոչ միայն այն տեղեկատվության կամ գաղափարների վրա, որոնք ընդունվում են բարեհաճությամբ կամ համարվում են անվտանգ և չեզոք, այլ նաև այնպիսիների, որոնք վիրավորում են, ցնցում կամ անհանգստություն են պատճառում:

Վերը նշվածը միջազգային իրավունքի սկզբունքներ են, որոնք ամրագրվել են նաև ՀՀ օրենսդրությունում և բազմիցս կիրառվել են դատական պրակտիկայում 2011 թվականից ի վեր:<sup>[1]</sup> Մինչդեռ՝ դիտարկվող վճռի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևանի ընդհանուր իրավասության դատարանը չի կիրառել այդ սկզբունքները, թեև դրանցից մի քանիսը վերացական կերպով նշվել են: Մասնավորապես, եզրահանգելով, որ վիճահարույց արտահայտություններում օգտագործվել են անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորող արտահայտություններ՝

դատարանը հաշվի չի առել, որ այդ արտահայտությունները պարունակում են պաշտոնատար անձի հանրային գործունեության վերաբերյալ քննադատություն, որը հանրային նշանակության խոսք է և ենթակա է պաշտպանության: Ըստ Սահմանադրական դատարանի թիվ 997 որոշման՝ այսպիսի գործերում հարկ է հաշվի առնել հրապարակման հանրային նշանակության հանգամանքը: Սա իմպերատիվ պահանջ է, որը չի իրականացվել: Փոխարենը դատարանը բավարարվել է միայն նշումով, որ նյութը պարունակում էր արատավորող արտահայտություններ, և չի վերլուծել, թե արդյո՞ք դրանք նաև հանրային նշանակության տեղեկություններ են: Դատարանի նման մոտեցումը իրավաչափ չէ ու չի համապատասխանում ազատ խոսքի պաշտպանության ժամանակակից պահանջներին:

Արտահայտությունների արատավորող բնույթը որոշելիս՝ դատարանն ընդհանրապես հաշվի չի առել, որ դրանց մեջ չկան անձնական բնույթի վիրավորանքներ, գռեհկաբանություն կամ ատելության խոսք: Վճռից բխում է, որ պաշտոնատար անձին հասցեագրված ցանկացած քննադատություն կամ գնահատող դատողություն կարող է համարվել փաստացի տվյալներ պարունակող հայտարարություն ու ենթակա լինել ապացուցման: Մինչդեռ՝ միջազգային իրավունքի նորմերը, որոնք ամրագրված են նաև ՀՀ դատական պրակտիկայում, սահմանում են, որ գնահատող դատողությունները ենթակա չեն ապացուցման: Դատարանը չի հետազոտել այդ հանգամանքը ու դրա փոխարեն լրագրողի արտահայտած կարծիքը գնահատել է որպես փաստացի տվյալներ պարունակող հայտարարարություն՝ այդպիսով պատասխանողների համար սահմանելով դրանց ճշմարտացիությունը ապացուցելու պարտականություն, ինչն անհամաչափ բեռ է ու անիրավաչափ մոտեցում:

Դատարանը չի հետազոտել, որ լրագրողի արտահայտած կարծիքն այն մասին, որ «նախկին նախարարը» կարող էր ներգրավված լինել անօրինական ֆինանսական գործարքներում, հանրային ծառայողների թույլատրելի քննադատության և հանրային նշանակության դեպքերի մասին հասարակությանը տեղեկացնելու ՁԼՄ-ների առաքելության շրջանակում էր: Ընդհանրապես չի կիրառել նաև հանրային ու մասնավոր շահերը փոխհավասարակշռելու իրավական գործիքակազմը, որը պահանջվում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով:

Դատարանը նաև չի հետազոտել, թե արդյո՞ք լրագրողը գործել է բարեխղճորեն ու ապահովել է հավասարակշռված լրատվություն: Ըստ Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշման՝ ընդհանուր հետաքրքրության խնդիրների մասին տեղեկություններ հայտնելու կապակցությամբ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով լրագրողներին տրամադրվող պաշտպանությունը ենթակա է այն նախապայմանին, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու համար ճշգրիտ և վստահելի տեղեկություններ՝ լրագրողական էթիկայի նորմերին

համապատասխան:[\[2\]](#) Եթե դատարանը փաստերը հետազոտեր այս սկզբունքի ներքո, կպարզեր, որ տվյալ դեպքում կարծիք արտահայտելիս նյութի հեղինակը չի գործել անբարեխղճորեն, քանի որ իր դատողությունները հիմնավորել է որոշակի փաստերով, որոնք հայցվորը չի հերքել ու, այդ առումով, հանրության մոտ առկա են չփարատված կասկածներ: Այդ հանգամանքը չհետազոտելը հարցականի տակ է դնում դատական ակտի իրավաչափությունը:

Թեև դատարանը էապես նվազեցրել է պահանջվող փոխհատուցման չափը, այն 5 միլիոն դրամից իջեցնելով մինչև 500 հազար դրամ, որն ընդհանուր առմամբ ողջունելի է, սակայն Խորհուրդը խնդրահարույց է համարում դատարանի պատճառաբանությունն առ այն, որ փոխհատուցման չափը պետք է լինի ողջամիտ ու արդյունավետ և որ «արդյունավետ» ասելով պետք է հասկանալ *«այնպիսի պատասխանատվության միջոցի կիրառում, որ իրավախախտում, տվյալ դեպքում՝ գրպարտությունը կատարած անձը հետագայում խուսափի նման գործողություններից և չփորձի կրկնել դրանք»*: Նման եզրահանգումը հիմք է տալիս կարծելու, որ փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հետապնդել է ոչ թե հայցվորի վնասը համարժեքորեն հատուցելու, այլ պատասխանող լրատվամիջոցներին պատժելու նպատակ: Այս մոտեցումը հակասում է քաղաքացիական իրավունքի առարկային՝ վնասի հատուցմանը, և պարունակում է քրեական իրավունքին բնորոշ տարրեր (օրինակ՝ հանցագործության կանխարգելումը), որոնք վերաբերելի չեն այս գործին: Խորհուրդն անընդունելի է համարում դատարանի տվյալ եզրահանգումը և գտնում է, որ դրանով բացահայտվել է լրատվամիջոցներին պատժելու քողարկված նպատակը:

Եզրափակելով վերը նշվածը, Խորհուրդը գտնում է, որ կայացված դատական ակտով տեղի է ունեցել պատասխանող լրատվամիջոցների արտահայտվելու ազատության անօրինական միջամտություն, որով խախտվել է նրանց տեղեկություններ ու գաղափարների տարածելու իրավունքը:

[\[1\]](#) Այդ սկզբունքները հավաքական կերպով կերպով ներկայացված է Սահմանադրական դատարանի ՄԴՈ-997 որոշման մեջ, որն ընդունվել է 2011 թվականի նոյեմբերի 11-ին: Այդ որոշումից ներշնչված՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2012 թվականի ապրիլի 27-ին ընդունեց մի շարք նախադեպային կարևոր որոշումներ, որոնցում ամրապնդեց այդ սկզբունքները: Այդ իմաստով ուշադրության արժանի են հետևյալ որոշումները. թիվ [ԼԴ/0749/02/10](#) որոշումը Վանո Եղիազարյանի գործով, թիվ [ԿԴ/2293/02/10](#) որոշումը Թաթուլ Մանասերյանի գործով, թիվ [ԵԴ/18063/02/19](#) որոշումը Հայկ Սարգսյանի գործով և այլն:

[\[2\]](#) Այս սկզբունքի մասին նշել է նաև Վճռաբեկ դատարանը՝ Հայկ Սարգսյանի գործով թիվ [ԵԴ/18063/02/19](#) որոշման մեջ. որը վկայակոչված է վերևում: Տե՛ս դատարանի որոշման 5-րդ էջի վերջին պարբերությունում:

## Տեղեկատվական վեճերի խորհուրդ

**Շուշան Դոյրոյան** (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության  
կենտրոնի նախագահ

**Արա Ղազարյան** - «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի տնօրեն

**Բորիս Նավասարդյան** - Երևանի մամուլի ակումբի նախագահ

**Արամ Աբրահամյան** - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

**Աշոտ Մելիքյան** - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

**Օլգա Սաֆարյան** - Փաստաբան

**Դավիթ Սանդուխյան** – Փաստաբան